

Ծանոթագրություններ

Ֆինանսական հաշվետվությունները ընկերության մասնակիցների ժողովի կողմից վավերացվել է 20 մայիսի 2014թ.-ին:

Ընկերությունը հիմնադրվել է 04.08.99թ.-ին, որպես «Ագրոլիզինգ» ՍՊԸ: Կենտրոնական բանկի խորհրդի 26.08.03թ. թիվ 299Ա որոշմամբ ընկերությունը գրանցվել և լիցենզավորվել է որպես «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն» ՍՊԸ:

Ընկերությունը վարկեր, ֆինանսական վարձակալությամբ սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ չսպառվող գույք է տրամադրում իրավաբանական և ֆիզիկական անձանց 1-5 տարի ժամկետով, 12-22% տարեկան տոկոսադրույքով:

Վարկերը տրամադրվում են շարժական և անշարժ գույքի, շրջանառու միջոցների գրավի, երաշխավորությունների ապահովվածությամբ՝ գրավի արժեքի 50-80%-ի չափով:

Ընկերությունը վարկեր և լիզինգ տրամադրելիս նախապատվությունը է տալիս գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտում գործող իրավաբանական անձանց:

Ընկերությունը իրավաբանական հասցեն է **ՀՀ, ք. Երևան, Կոնդի 210**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Ազատության 1/21, 39**

Հեռախոս՝ **(060) 44 60 06, (060) 44 50 05**